մէն առնէ ի սերնդոց թագաւորաց Մարտինի։ Սա ինքն Արթուք ի տիրել իւրում քաղաքին սրբոյ ի Հարկի կացոյց զԲերեզմանն Քրիստոսի, եւ պահանջէր յիւրաքանչիւր ազգաւորաց մէն մի ոսկի ի մտանել նոցա ի տաճար անդր։ Եւ ի նմին ժամանակի եկեալ էր յարեւմտից Լատին կոմն, որոյ անուն ասի լինել Սինկեղ յորմէ աւելի պահանջէին քան զահմանեալն, և յընդդէմ դառնալ նորա՝ խոչտանգեցին զնա դանիւք և հարեալ հանին զմի ակն։ և նորա առեալ զայն եդ ի գրպանի իւրում եւ տարեալ եցոյց ի Հռոմ։ Վ.ԺԲ.ԱՆ։ 146։

Եւ յետ մահուան Արթուքայ, ժառանգեցին պիշմանութիւնն երուսաղէմի որդիք նորին Եկլզալի եւ Սուգման։ ՀՂՀ (1091) իբրեւ զամս չորս՝ մինչեւ ի մահն Թըթուշայ։ Եւ իյաջորդ ամին եկ զօրավարն Եգիպտոսի Աֆթալ պըն Պէմիր էլ-ճէմալի բազմութեամբ զօրաց Մուսթալի Յալիփային Յաթիմեանց եւ տիրեաց Երուսաղէմի։ իսկ Եկլզալ և Սուգման խոյս տուեալ մեկնեցան անտի։ Եւ վերստին եմուտ Երուսաղէմ իւրովք սահմանօք ընդ լծով ծառայութեան Յաթիմեանց։ ՀՂԹ (1096)։

Սակայն ի ժամանակիս յայսմիկ անկեալ և տկարացեալ էր ի վաճառս և ի զօրութենէ Յաթիմեան հարստութիւնն Եգիպտոսի, եւ օր քան զօր դիմէր ի վատթարութիւն անդր։ զօրավարն Աֆթալ՝ որ միանգամայն խնամակալ կացեալ էր Պետութեանն, չէր ճեռնհաս ի դիմի հարկանել մերձաւոր թշնամեաց իւրոց և վանել զնոսա ի սահմանացն, եւ մանաւանդ երկնչէր ի Լատինաց որ սկսեալ էին երեւիլ ի կողմանս Ասորւոց, եւ ոչ իշխէր ելանել ի պատերազմ ընդդէմ նոցա, հակառակ էյուպեան հարբսաւթեան, որոյ վասն Թիւրք եւ Լատինք հատին զբազումս զաւառս և քաղաքս յԱսորիս՝ ի սահմանացն Եգիպտոսի։ Եւ յետ ոչ բազում աւուրց տիրեցին նաեւ Յաջակիր զօրքն Լատինաց Ասորւոց բռնադակ Գաղեստինոյ և քաղաքին սրբոյ, որպէս ունիմք ասել ի կարգի իւրում։